

ԲԵԼԼԱ ԻՍԱՀԱԿՅԱՆ*

Մարդիրոս Սարյանի պուն-թանգնարան

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ԵՎ ՊԱՆԴԻՏՈՒԹՅԱՆ ՇԵՄԱՆ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր՝ Ավետիք Իսահակյան, ստեղծագործության մոտիվներ, մայրական սեր, հայրենիք, պանդխտություն, որդիական պարտք, կարոտ:

Ներածություն

Ավետիք Իսահակյանը պաշտել է մորը՝ Ալմաստ Ղտճյանին, որին շրջապատը հարգանքով ու սիրով կոչում էր Ապլա (մեծ մայրիկ): Իսահակյանը ընտանիքի կրտսեր զավակն էր և բնականաբար, Ապլայի կողմից ամենասիրվածը: «Ենց մորից է նա լսել իր կյանքի առաջին հեքիաթները, երգերը, զրոյցներն ու բանաստեղությունները: Նա շատ է սիրել, մանավանդ ծմրան երեկոները, պապենական տան, բովսարու առաջ լսել Ապլայի վառ երևակայության ծնունդ պատմածները... Եվ քանի որ հայրը վաղ էր մահացել, ապա որդիական սիրո ողջ զգացումները նա նվիրել է իր մորը:

Հայտնի է նրա թևավոր խոսքը. ««Ենց միայն մայր ունենալու համար արժի աշխարհ գալ»:

Իսահակյանի վաղ շրջանի «Բալես ունի հնդու-մաթա....» (1892 թ.) բանաստեղության հիմքում ընկած է Ապլայից լսած օրորոցայինը, զարմանալի ինքնաբուխ ու ազգային ոգով կերտված մի հյուսվածք: Օրորոցային երգով հարուստ հայ բանահյուսության ու բանաստեղության պատմության մեջ այս երկն ունի իր ուրույն տեղը.

Բալես ունի հնդու-մաթա,
Ուկի օրոցք, ատլաս ծածկոցք,
Պուառն' դարդար, նըխշուն բալա,
Պաճիկ կենես... Օր-օր, լա, լա,
Նանիկ կենես, նանի', դա՛ր-դա՛ր,
Աչքդ ու ունքըդ – աստղ ու կամար:

* Հոդվածը ներկայացվել է 18.06.21, գրախոսվել է 23.06.21, ընդունվել է պահպանության 02.08.21:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Ցորեկ եղավ, ոչխարն եկավ,
Ազիզ բալես քընած մընաց.
Վեր ե՛լ, բալա, անուշ ճըղա,
Տիտիկ արա՝, ծիծիկ մամա՝,
Պիծիկ-միծիկ տոտիկ արա՝.

Հո՛պաա, բալիկ, քունդ անուշ.
Շաքար ու նու՛շ, թուշդ անուշ:

Տարիներ շարունակ այս բանաստեղծության տեքստից անարդարացիոն դուրս են թողնվել նրա պարտի հետևյալ երեք տողերը.

Զան Տիրածին, Աստվածածին,
Չար աչքեն, չարոցքեն
Ազատ պահե՛ս իմ բալես...¹

Եվ միայն Իսահակյանի ակադեմիականի առաջին հատորի տեքստում (կազմողներ՝ Ավիկ Իսահակյան և Անահիտ Վարդանյան) դրանք վերականգնվեցին:

Առանձին հետազոտության առարկա է երկերի կերտման վարպետությունը, երբ ստեղծվում է այնպիսի մի գործ, որ ոչչով չի տարբերվում հայ բանասիրության դասական օրորոցային երգերից: Ակսած այս օրորոցայինից մինչև «Աբու-Լալա-Մահարի» պոեմում հնչող մորն ուղղված վսեմ տողերը, Իսահակյանի մայրական կերպարի հիմքում ընկած է պոետի մոր՝ Ապլայի ազնվաբարու ու գթասիրու կերպարը: Սակայն ճակատագիրը, ասես մի անխնա ձեռքով պիտի տարիներ շարունակ բաժաներ որդուն իր պաշտելի մորից:

Եվ հենց այդ ճակատագիրն է Իսահակյանի պոեզիայում միահյուսում մայրական սիրո հետ և հայ մարդու ճակատագրի համար մի այլ շատ կարևոր՝ պանդխտության թեման, հաղորդելով դրանց դրամատիկ իմաստ և հումանիստական հնչեղություն: Այստեղ արդեն հանձինս մոր կերպարի՝ առաջ է մղվում սուրբ հայենիքի՝ Հայաստանի հավաքական կերպարը ստեղծելու գաղափարը, և հանձին նրա զավակի կերպարի՝ աշխարհով մեկ սփոված, հայրենիքից հեռացած, հայ պանդուխտի հավաքական կերպարը, ինչը հենց Իսահակյանի երկերում հասավ իր գագաթնակետին: Եվ դա արվում է այն-

¹ Իսահակյան 2003, 69:

Իսահակյան Բ.

քան բնական, որ միայն իսկապես ժողովրդական բանաստեղծի, հայրենիքի զավակի՝ Իսահակյանի գրչի տակ կարող էր իրականանալ:

Ահա կարդում ենք ավանդապաշտ Շիրակի սրտից՝ Ալեքսանդրապոլից «դրսի աշխարհներ» ելած (սույն դեպքում Գերմանիա ուսման մեկնած) 18-ամյա Իսահակյանի առաջին բանաստեղծական ուղերձը պաշտելի մորը, որը սակայն վեր է սովորական քնարական բանաստեղծության հասկացողությունից, այն ողբերգական շեշտադրումներով կերտած մի երկ է՝ ընդհանրապես հայ մարդու ճակատագրի վերաբերյալ.

ՄԱՅՐԻԿԻՍ

Հայրենիքես հեռացել եմ,
Խեղճ պանդուստ եմ, տուն չունիմ,
Ազիզ մորես բաժանվել եմ,
Տըխուր-տըրտում, քուն չունիմ:

Սարեն կուգաք, նիշու՛ն հավեր,
Ա՛խ, իմ մորըս տեսել չե՛ք.
Ծովեն կուգաք, մարմանդ հովե՛ր,
Ախըր բարև բերել չե՛ք:

Հավք ու հովեր եկան կըշտիս,
Անձեն դիպան ու անցան.
Պապակ-սըրտիս, փափագ-սըրտիս
Անխոս դիպան ու անցա՞ն:

Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարուցել եմ, մայրի՛կ ջան.
Երնե՛կ, երնե՛կ, երազ լինիմ,
Թըռնիմ մոտըդ, մայրի՛կ ջան:

Երբ քոմըդ գա, լուռ գիշերով
Հոգիդ գըրկեմ, համբույր տամ.
Սըրտիդ կըպնիմ վառ կարոտով,
Լա՛մ ու խընդա՛մ, մայրի՛կ ջան...²

(1893)

² Իսահակյան 2003, 99:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Յուրաքանչյուր հայի համար այս բանաստեղծությունը մարմնավորում է ոչ միայն մոր հանդեպ տաճած որդիական սիրո զգացումը, այլև աշխարհով մեկ ցրված հայ պանդուխտ մարդու կարուտը, սերն ու հավատամքը առ հայրենի եզրը:

«Մայրիկիս» բանաստեղծությունը իիմքը դրեց մեր ուսումնասիրած թեմայով գրված հսահակյանի երկերին, նրան հաջորդեցին «Մայրս տեսավ ինձ շա՛տ տիտուր...», «Մայրի՞կ, նայիր, արևն ինչպե՞ս...», «Մայրիկ, հիվանդ եմ, սիրտըս քրքրված», «Է՛տ ի՞նչ կըրակ կանես, մերի՞կ», «Դարդը հետս է, հետըս կուգա...», «Ա՛խ, մի սիրտ լիներ մաքուր սիրով լի...» բանաստեղծությունները, որոնք «Մայրիկիս» կողքին հավասար տեղ կարող են գրավել, ինչպես նաև «Կըտեսնեմ, ահա – լուս երեկոյին...» բանաստեղծությունը: Այն գրվել է 1911 թվականի օգոստոսի 13-ին, Կոստանդնոպոլսում, երբ նոր էր սկսվում հսահակյանի «մեծ պանդխտության» շրջանը, դեռևս մոտ ու անջնջելի էին հեղինակի հիշողության մեջ մոր դիմագծերը, ում գրկին նա թողել էր իր միակ մեկ տարեկան որդուն, դեռևս նրա աչքի առջև էր ուժիներով շրջապատված հայրական շեմը...

Իսկական պանդխտությունը, որ պիտի տևեր երկար ու ձիգ տարիներ, նոր էր սկսվում...

Սակայն հենց այս բանաստեղծության մեջ, առաջին հայացքին առնչվող լոկ մայրական սիրո թեմայի հետ, հսահակյանը կարողանում է բացահայտել ոչ միայն իր մոր, այլև հայ ժողովողի մտածողությանը հատուկ մարդասիրությունն ու գթասրտությունը, որ այսօր էլ առանձնացնում են հայ ժողովողին աշխարհի բազում ժողովուրդներից, ում թե բախտն է ավելի ժպտացել, թե ուժն է ավելին եղել, սակայն այդպես էլ չեն կարողացել հասել հսահակյանի ակնարկած մարդասիրության աստիճանին: Ինձ երբեմն թվում է, թե եթե աշխարհի մի որևէ անվյունում կազմակերպվեր գիտաժողով՝ ուսումնասիրող այս կամ այն ժողովուրդների ազգային ամենացայտուն հատկանիշները, որոնցով ազգերը տարբերվում կամ նմանվում են իրար, այս երկը մենք՝ հայերս, կարող էինք ներկայացնել որպես մեր ժողովողի «արյան բաղադրություն»:

Ունկնդիրենք մենք էլ Ապայի աղոթքին, որն ընդամենը մի քառասող է կազմում, սակայն իր գրության օրից մինչև ներկա օրը չի կորցրել ո՛չ իր իմաստը, ո՛չ իր խրատը, ո՛չ էլ իր արդիական հնչեղությունը.

Կըտեսնեմ ահա, - լուս երեկոյին

Բարակ ծուխ կենի իմ հոր օջախեն.

Իսահակյան Բ.

Եվ ուտիներս մարմանդ կօրորվին,
Ծղրիդը կերգե անտես խորշերեն...
Մեղմ ճրագի տակ նստել է տխուր
Ծերունի մայրու մանկիկս գրկին. –
Մուշ – մուշ քնել է մանկիկս անդորր.
Ու աղոթք կանե մայրիկս լրին. –
«Ամենեն առաջ թո՞ղ ինքը հասնի
Ամեն հիվանդի, հեռո՛ւ ճամփորդի.
Ամենեն հետո թո՞ղ ինքը հասնի
Քն՛զ, իմ խեղճ որդի՝, իմ պանդուստ որդի»:
Անո՞ւշ ծուխ կելսի իմ հոր օչախեն,
Մայրս կաղոթե՛ մանկիկս գրկին.
Ծղրիդը կերգե անտես խորշերեն
Եվ ուտիներս մարմանդ կօրորվին³:
(1911)

Ապլայի աղոթքի հիմքում ընկած է մի մտածողություն, որը թերևս հատում է գուտ հայ մորը, որի զավակները սփոված են աշխարհով մեկ, մորը մի ժողովրդի, որը երբեք բռնությամբ և ուժով չի հարթել իր ճամփան, և որը Աստծո ողորմությանը նույնիսկ սովոր է սպասել վերջինը: Սա և՛ ազգի առաքինությունն է, և՛ ուժը: Այսպես ենք ապրել մենք երեք հազար տարի...

Տոգորված քրիստոնեության գաղափարով, Իսահակյանի մոտ աղոթքն ոնքի դարերի խորքից եկած իմաստություն, այն վկայությունն է հայ ժողովրդի խաղաղասեր ու արդարամիտ էովթյան:

Այս, ինչպես և «Մայրիկիս» բանաստեղծությունը, ինչ խոսք, նոր որակ էին բերում հայ քնարերգության ավանդական այս թեմաներին՝ մայրական սիրուն ու պանդուստի երգերին, բարձրացնում էին դրանք մի նոր աստիճանի՝ հաղորդելով համամարդկային հնչեղություն: Պատահաբար չէ, որ այս երկու գործերը մեծ ոգլորությամբ թարգմանել է XX դարի ոռու մեծ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը: Նա իր նամակներից մեկում գրում է, որ ինքը միշտ հիշում է, որ «Իսահակյանը – պանդուստ բանաստեղծ է» և այս հանգամանքը մարդկայնորեն ևս հուզում է նրան, չէ՞ որ վերջին հաշվով աշխարհի բոլոր մեծ բանաստեղծները, ինչ-որ մի տեղ հարազատ հոգիներ են:

³ Իսահակյան 2003, 388:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Մոր և կյանքից հոգնած ու հիասթափված զավակի երկխոսությունն է ընկած «Էդ ի՞նչ կըրակ կանես, մերի՞կ» բանաստեղծության հիմքում: Գթասիրտ մայրը ջանում է «դարման» գտնել տանջվող զավակին, բայց ապարդյուն, նրա խոցված «սրտի վերքին» սպեղանի չկա...

- Էդ ի՞նչ կըրակ կանես, մերի՞կ:
- «Բալաս, վերքիդ դեղ կեփեմ»:
- Ա՛խ, իմ վերքը սիրտս է մերի՞կ.

Դեղ ու դարմանդ ի՞նչ անեմ.

Սրտիս վերքը խորն է, մերի՞կ,

Լավի դարձի հոյս չըկա.

Մի՛ քըրքըրիր սիրտըս, մերի՞կ.

Խոր – խոցերոս ճար չըկա⁴:

Այս, ինչպես և «Մայրի՞կ, նայի՛ր, արևն ինչպե՞ս» բանաստեղծություններում թախծախի զրոյցը մոր և որդու միջև հսահակյանի հոգուց էր գալիս, չէ՞ որ ինքը՝ բանաստեղծը, իր կյանքի փորձություններին ու դժվար պահերին մեկ անգամ չէ, որ անկեղծ զրոյցի է նստել մոր հետ, երբ ինքը գտնվում էր հայրենի Ալեքսանդրապոլս կամ Ղազարապատ գյուղում: Իսկ այդպիսի պահերն այնքան հազվագյուտ էին: 18 տարեկանը չբոլորած, հսահակյանն ուսման է մեկնում Գերմանիա և երեք տարի կտրված է հայրենի տնից, մոր աշքից: Տասնիննայիս պատանին դժվար պահերին մոր կարոտի զգացումները հանձնել էր իր միակ ընկերոջն ու խոստովանատեղին՝ իր «Հիշատակարան» գրքին: Ահա նա գրում է Լայացիզում. «Ա՛խ, Ապլայիս մոտը լինեի, կնստեր մոտս ու միշտ ճակատս կշղեր ու ամենաազիզ կտորը ինձ կրերեր ու գաղտնի կոտար: Ա՛խ, Ապլա ջան, Ապլա՛ ջան»⁵:

Հենց Լայացիզում նա գրում է քնարական բանաստեղծությունների շարք՝ կազմված 12 հատվածներից, որոնք զետեղվել են «Հիշատակարանի» 1894 թ. գրառումներում: Սա ևս մի նոր շարք էր հսահակյանի ստեղծագործությունում, արձակի և չափածոյի զուգադրությամբ, որն սկսվում է մորն ուղղված խոստովանանքով: Ահա մի հատված այդ արձակ բանաստեղծությունից.

«...Ես մենակ եմ, մայրի՞կ ջան, ինձ ընկե՛ր եղիր, թև ու թիկունք եղիր – դու ժայոի պես ամուր ես, թո՛ղ մամոի պես կրծքիդ կպնիմ, մայրի՞կ ջան:

⁴ Հսահակյան 2003, 151:

⁵ Հսահակյան 1977, 158:

Իսահակյան Բ.

...Կգամ, կգամ շոտով, թոշնից թև կառնեմ, կգամ, մայրի՝ ջան, քեզ մոտ կգամ – գրկիր ինձ. – սանձիր ձիս, կապիր գրքերս թամբին, կապիր թուրս մեջքիս – համբուրիր ինձ, մայրի՝ ջան»⁶:

«Հիշատակարանի» այս շարքում է հետևյալ գողտրիկ բանաստեղծությունը, որը երբնիցե չի գետեղվել նրա պոեզիայի հատորներում, սակայն իր ավարտուն գեղարվեստական կառուցմամբ, ասելիքով կարող էր դասվել Իսահակյանի լավագույն քնարական գործերի շարքում:

Մայրի՝, դու իմ փոքր հասակում,
Երբ ես քո կրծքում վառ աստղիկի պես
Ժպտում էի ու ձեռքս մեկնում,
Դեպի երկինք՝ աստղերը բռնելու,
Դու միշտ ասում էիր. – քու աստղը բռնիր,
Որ հեռվում, հեռվում պայծառ շողում է...
Ես այն օրվանից նազելի՝ մայրիկ,
Իմ աստղն եմ որոնում անհուն երկնքում,
Ես որոնում եմ ու չեմ գտնում⁷:

Նոր հայրենիք վերադարձած երիտասարդ բանաստեղծին, որպես ազգային-ազատագրական պայքարի գործչի, 1896 թ. մայիսին ցարական իշխանությունները ձերբակալում են և մեկ տարով մեկուացնում Երևանի նահանգային բանտում:

Չանգվի ափին ընկած խաչածն բերդում 21-ամյա որդուն է ուղղում նոր գարնանամուտին իր խոսքերը պոետի մայրը. «Ա՞խ, կանանչներ, դուք արևերես ելաք, Յարաք բալես ե՛րբ կելնի բանտեն...»: Այս հարցումը Իսահակյանը որպես բնաբան դրել է «Կոռունկները շարա՞ն-շարա՞ն...» բանաստեղծությանը: Որդեկարոտ մայրը բնությանն է հարցնում որդու ճակատագրի մասին, բնության հետ է կիսում իր տագնապն ու ցավը.

...Գարունն եկավ, - արևերես
Ելան ծիլ ու ծաղիկներ.
Ա՞խ, յարաք ե՛րբ ազիզ բալես
Կելնի բանտեն, կըռունկնե՛ր...
Կըռունկները շարա՞ն - շարա՞ն
«Կը՛ռո, կը՛ռո» կանչին ու եկան,

⁶ Իսահակյան 1977, 197:

⁷ Իսահակյան 1977, 198–199:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

«Գարունն եկա՛վ, գարունն եկա՛վ»...

Անուշ կանչին ու անցան⁸...

1897

Այսպես նա շռայլ շաղ է տախս իր քնարական հրաշալիքները՝ հայ պոեզիայի «մայրական սիրո» հավերժ թեմային տալով իր եզակի, խորը մարդկային հնչեղությունը:

Նոր դրուս եկած Երևանի բանտից Իսահակյանին՝ արդեն ճանաչում գտած բանաստեղծին, «Երգերի ու վերքերի»⁹ հեղինակին, իշխանությունները մեկ տարով աքսորում են Օդեսա: Եվ ճակատագիրը կրկին որդուն բաժանում է մորից: Իսահակյանի մայրը, այդ աստվածավախ կինը, նամակ է գրում Օդեսայի գեներալ-նահանգապետին որդու աքսորի ժամկետի վերաբերյալ, որը «թյուրիմացաբար» տեղական իշխանությունները փորձում էին մեկից դարձնել երեք տարի, և իրազեկ պահում նրան դատական ատյանի նախնական վճոհ մասին: Նորից սպասում, նորից անքուն գիշերներ: Իսկ Իսահակյանը գրում է հեռավոր Օդեսայից, հայացքը հառած իր հայրենիքին, իր սուլը մորը.

Եվ հոգուս մեջ մի ձայն ծորեց,
Մի ձայն՝ քնքուշ, սուլը սրտից. –
Ախ, այն մայրս էր, կանչում էր ինձ
Հայրենիքիս ափերից¹⁰...

Հաջորդ տարիներին Իսահակյանի կյանքը վճորուշ կերպով կապված էր հայ ազգային-ազատագրական շարժման հետ: Երիտասարդ բանաստեղծ-քաղաքական գործի ճամփան դժվարին էր ու տատասկներով ծածկված – սակայն նրա հայրենանվեր հոգու համար ընտրություն չկար: Եվ հենց հայրենասիրական գործունեության պատճառով, Իսահակյանին վիճակվեց տեսնել և քաշել թե՛ բանտ, թե՛ աքսոր, թե՛ տարիներ ձգվող պանդխտություն:

Իսահակյանը հայ բանաստեղծներից առաջինն է պատկերում ազգային մարտիկի՝ հայ ֆիդայու դժվարին ճակատագիրը՝ 1900–1910 թթ. իր ստեղծած «Հայուսկի Երգեր» շարքով, որը նա ստորագրում էր՝ «Հայ-գուաան» անվամբ:

Ազգային-ազատագրական պայքարի պոեզիայի հիմնական մոտիվներից մեկը դա մայրական սերն է, կարոտը՝ հայրենիքի ազատության համար

⁸ Իսահակյան 2003, 128:

⁹ Ավ. Իսահակյանի անդրանիկ գիրքը՝ «Երգեր ու վերքեր» բանաստեղծությունների ժողովածուն լրիս է տեսել Ալեքսանդրապոլում, 1898 թ., «Գ. Սանոյան» տպարանում:

¹⁰ Իսահակյան 2003, 172:

Իսահակյան Բ.

մարտնչող զավակի հանդեպ: Այս տեսակետից հայ քնարերգության ոսկե էջերից է «Որսկան ախաբե՛ր, սարեն կուգաս...» բանաստեղծությունը¹¹, հայունի ժողովողի ողբերգական ճակատագիրը ներկայացնող մի անմահ քերթվածք: «Որսկան ախաբերը» ահա մոտ մի դար է, ինչ ներթափանցել է ամեն հայ մարդու հոգեկան աշխարհ, այդ երգը իրեն համարժեք հնչեղությունը գտավ նրա հիման վրա Կերտած Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիայի անմահ մեղեղիների մեջ:

– «Որսկան ախաբե՛ր, սարեն կուգաս,

Սարի մարալ կը փնտրես,

Ասա՛, յարա՞ք դուն չըտեսա՞ր

Իմ մարալըս, իմ բալես:

Դարոի ձեռքեն սարերն ընկավ,

Իմ արևս, իմ բալես,

Գլուխն առավ, քարերն ընկավ

Իմ ծաղիկըս, իմ լալես»...

– «Տեսա, քուրի՛կ, նըխշուն բալետ

Կարմիր-կանանչ է կապեր,

Սիրած յարի համբուրի տեղ

Սրտին վարդեր են ծըլեր»:

– «Որսկան ախաբե՛ր, ասա, յարաք

Ո՞վ է հարսը իմ բալիս,

Ո՞վ է գրկում չոր գըլուխը

Իմ մարալիս, իմ լալիս»:

– «Տեսա, քուրի՛կ, դարդոտ բալետ

Քարն է դըրեր բարձի տեղ,

Անուշ քընով տաք գընդակն է

Կըրծքում գըրկեր յարի տեղ:

Սարի մարմանդ հովն է շոյում

Ճակտի փունջը մարայիդ,

¹¹ Ավ. Իսահակյանի բանաստեղծական այս գլուխգործոցի տեքստի հիման վրա աշխարհահոչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը 1944 թ. գրել է իր «Երկրորդ սիմֆոնիան» («Զանգերով սիմֆոնիա»):

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Ծաղիկներն են վլրան սըգում,
Ազիզ բայիդ, խեղճ լալիդ»¹² ...
(1902)

Մեր աղեղիայի պատմության այս ամենառողերգական երկերից մեկը՝ «Որսկան ախապերը» երգել են հայ ֆիդայական շարժման զորադեկավարներից մինչև շարքային մարտիկը, մինչև Հայրենական Մեծ պատերազմի զինվորները... այդ դողանջները գալիս են և այսօր խոսում հայ մարդու հոգու հետ, տոգորում նրան հայրենիքին նվիրվածության գերագույն գգացումով:

Կովկասում ապրած շրջանում հսահակյանի հրատարակած լավագույն գրքերից մեկը՝ «Բանաստեղծություններ» (Բաքու) 1903 թ. ոնի հետևյալ ընձայականը՝ «Անգին մորս՝ Ալմաստ հսահակյանին նվիրում եմ բանաստեղծություններս»: Ժողովածուն բացվում է հենց մորը ծոնված «Գուցե իմ հեծծանք, հառաչք և մրմունք...» բանաստեղծությամբ, որն ավարտվում է հետևյալ տողերով.

Դու լրցրիր իմ մեջ ծովի չափ մեծ սեր –
Այրվիլ, որ լուս տալ ամբոխի համար.
Ընկնիլ փոթորկի, հըրաբուխի մեջ,
Ամբոխի համար, Աշխարհի համար...
Սիա՞ իմ սիրտը... Նայիր դու մեկ-մեկ.
Ընդունի՞ր մայր իմ, օրինի՞ր ինձ, մայր իմ...

Գրքում բազմաթիվ են մորն ուղղված բանաստեղծությունները, ընդամին նրանցից մի քանիսը այլ ժողովածուներում հետագայում չեն գետեղմել: Այո՛, մինչ վտարանդիհության սկիզբ ընկած տարիները, այն միակ ու անկրկնելի շրջանը եղավ, երբ մայր ու որդի իրար կողքի էին, սակայն ճակատագիրը նորից պիտի նրանց բաժաներ 1906 թ., երբ հսահակյանը մոտ մեկ տարի ժամկետով բանտարկվեց Թիֆլիսի տիբրահոչակ Մետեխի բերդում:

Եվ հենց այդ շրջանում է նա գրում իր ամենահոգիչ մարդասիրական երկերից մեկը.

Երազիս տեսա, որ մայրս՝ թշվառ,
Ծեն պատերի տակ, մեծ փողոցներում,
Ա՛յնպես դողդոցուն, հիվանդ ու անճար,
Անց ու դարձողին ձեռն էր կարկառում:

¹² Իսահակյան 2003, 269:

Իսահակյան Բ.

Երազիս տեսա, որ իմ մայրը՝ ծեր,
Ցնցուտիներով պատաճ մոլուգևան,
Եվ մարդիկ՝ անգութ, անտարբեր, անսեր,
Չբռսնում էին և հրում նրան:

Եվ երազիս մեջ ես դառըն լացի,
Ու ցավից զարթնած՝ լաց եղա անքուն. –
ԱՇ, որքա՞ն մայրեր՝ խեղճ, առանց հացի,
Մեր շուրջն են դողում ու մենք չենք զգում¹³:

(1908)

Վարպետի որդին՝ Վիգեն Իսահակյանը, հիշում էր, որ Եվրոպայում ապրած տարիներին բանաստեղծը մի առանձին սիրով ու գթարտությամբ էր մոտենում հայտնի քաղաքների՝ «շեն պատերի տակ» կուչ եկած միայնակ ու ծեր մայրերին, եղած դրամը տայիս նրանց, հուզվում ու աչքերը լցվում էին. «Մայրերը սրբություն են, - ասում էր նա, - ինչ ազգի էլ պատկանեն»: Այսպես, Ապլայի շնորհիվ հարստանում է համաշխարհային պոեզիան...

Հաջորդ բաժանումը եղավ ճակատագրական. 1911 թվականի հունվարին բանաստեղծը պիտի հրաժեշտ տար Ակեքսանդրապոլի հայրական տանը, իր մեծագույն պաշտամունքին՝ Ապլային, և այլս նրանք չեն հանդիպելու...

Պանդիստության ճամփաները բաժանեցին բանաստեղծին մորից: Մայրը նրան պիտի հայտնվեր արդեն միայն երազներում: Ինչ-որ մի հանգույցում, թնականաբար իրար են միահյուավում մոր և երազի, հայրենիքի և երազի թեմաները: Պանդուխտ մարդը էլ ուր, եթե ոչ երազում կարող էր տեսնել մոր ու հայրենի եզրի նվիրական պատկերը, և զնալով երազը դառնում է թե՛ Իսահակյանի կյանքի, թե՛ նրա պոեզիայի անբաժանելի մասնիկը, մշտական ուղեկիցը:

Ոչ մի բանաստեղծ այդքան գեղեցիկ ու միաժամանակ այդքան տիխուր երազներ չի հյուած իր երկերում, ինչպես Իսահակյանը: Կյանքի մայրամուտին՝ 1955 թ. հոկտեմբերի 30-ին, ծննդյան 80-ամյակի օրը, Երևանում Պետության դահլիճում կազմակերպված հանդիսավոր նիստին ասված իր ելութուր, բանաստեղծը խոստովանել է. «Ես երազում էի միշտ ապրել Շիրակում՝ հորս տանը, մորս մոտ. և երգել իմ Շիրակը և նրան իմաստավորող ժողովրդին: Բայց իմ այդ համեստ երազը չկենսագործվեց...»¹⁴:

¹³ Իսահակյան 2003, 360:

¹⁴ Իսահակյան 1977, 291:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Կարելի է ասել, որ այդ փափագն իրականանում էր պանդուխտ բանաստեղծի միայն երազներում:

Եվ հենց այս շրջանում, երբ առավել ուժգնանում էր նրա կարոտը մոր հանդեպ, հայրենիքի հանդեպ, երբ նա գիտակցում էր, որ գուցե այլևս նրանք չեն հանդիպելու – մայրական սիրո և պանդխտության թեման հասնում է հսահակյանի պոեզիայում առավել վերալաց բարձունքների:

Դրա փայլուն օրինակներից մեկը «Երազ» բանաստեղծությունն է.

ԵՐԱԶ

Օտար երկիր էր գնացել որդին,
Եվ անցել էին տարիներ տրտում.
Մայրն սպասում էր տենչալի դարձին,
Եվ այսօր որդին ուրախ դարձավ տուն:

Իրար գիրկ ընկան անհուն կարոտով
Եվ համբուրվեցին երկար ու երկար.
Լաց եղան մեռած հորը հիշելով
Եվ ցնծության մեջ մոռացան աշխարհ:

Վառեցին նորից օջախն հայրենի,
Խրճիթը լցվեց խնդուպյամբ անդորր.
Խոսեցին անցած օրերի մասին,
Ապա քուն մտան անհոգ, բախտավոր:

Երբ մայրը զարթնեց, սոսկումով տեսավ-
օջախը՝ հանգած, խրճիթ՝ ամայի.
Եվ որդի՞ն, որդի՞ն, կաթողին որդի՞ն
Նորից բանտի մեջ՝ զարկված շղթայի¹⁵...

1918 թվականին, Ժնևում հսահակյանը գրել է «Հիշատակարանում». «Ա-
հավոր ուժ է հայրենիքի սերը... Մոր նման միշտ սիրում եմ, միշտ կարոտը
թարմ է և միշտ անհագուրդ... Մոր և հայրենիքի սեր – հավիտյան նոր, հա-
վիտյան թարմ, կուական, անձանձիր...»...¹⁶:

Օտարության մեջ էր, հեռավոր Ծվեյցարիայում, երբ առավ մոր մահվան
բոթը: Սակայն, օ՛, զարմանք, բանաստեղծը կանխազգացել է այդ լուրը, այդ-
պես է լինում՝ մեծ, սիրող հոգիների մոտ, երբ ինչ-որ գերբնական զգայնութ-

¹⁵ հսահակյան 2003, 410:

¹⁶ հսահակյան 1977, 330:

Իսահակյան Բ.

յամբ նրանք կանխատեսում են իրենց մերձավորի կամ սիրելիի հետ կապված որևէ արտակարգ եղելություն, անգամ եթե նրանց բաժանում են հազարավոր կիլոմետրեր:

Ահա ինչ է գրել Իսահակյանը «Հշատակարանում» 1919 թվականի հունիսի 14-ին. «Լուսադեմին երազ տեսա, մայրս ժպտում էր, իր սովորական տխուր, վշտահար ժպիտը աջերի մեջ. կարծես ձեռքեր չոներ, արմոննկից սկսած. այդպես թվաց. զարթնեցի. մի տեսակ զգացում ունեի հոգուս մեջ, որ պիսին երբեք չէի ունեցել մորս երազում տեսնելու դեպքում, մի խորհրդավոր, տարօրինակ զգացում (և մորս շատ վաղուց չէի տեսել), այդ զգացումի ազդեցության տակն էի, եռոք քիչ անցած, առավոտ, անկողնուս մեջ, լսեցի մորս մահը...»

Զարմանալի խորհրդավոր զուգադիպում...

...Մորս մահից հետո – աշխարհը դատարկվեց աչքին. ամեն բան թվում է ունայն, սուստ, միամիտ, անցավոր, թռչող, խարեական...»¹⁷:

Բանն այն է, որ հարազատներն իմանալով, թե ինչ սեր է տածել Ավետիքը մոր հանդեպ, բանաստեղծին Ավալյախ վախճանի լուրը միանգամից չեն հայտնել, այլ մի որոշ ժամանակ անց: Հայտնի է, որ այդ բոթն առնելուն պես բանաստեղծը օրեր շարունակ ծանր ապրումների մեջ է եղել:

Այդ ապրումների ազդեցության տակ Իսահակյանը 1919 թ. հովիսին ժննում գրում է. «ԱՇԽ, ասացին ինձ, թե մեռել ես դու...» բանաստեղծությունը.

ԱՇԽ, ասացին ինձ, թե մեռել ես դու,
Մեռել ես վաղուց, մայրի՝կ, իմ հոգիս...
Մեռել ես, չըկաս... Ծածկել է հալես
Անհուն խավարը դեմքըդ թախճանուշ,
Ու հող ես դառնում... Ավա՛ղ, այսուհետ
Քեզ չեմ տեսնելու, մայրի՝կ իմ քնքուշ...

Սակայն հանապազ, ինձ հետ անբաժան՝
Մի անհայտ տեղից, ինձ այնպես մոտիկ,
Գիշեր ու ցերեկ, ու ամեն մի ժամ,
Ամեն մի վայրկյան անծայր կարուտով,
Աչերդ լեցուն սիրով ու գթով՝
Անթարթ, անքթիթ հառել ես վրաս,
Սրտով, սրտակից,

¹⁷ Իսահակյան 1977, 339:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Մի՛շտ նայում ես ինձ, մի՛շտ նայում ես ինձ,
Մայրի՛կ, իմ հոգիս¹⁸...

1919 թ., հովիս, ժնև

Տասնիննը տարի առաջ նոյն Շվեյցարիայում (Ցյուֆիխում), Իսահակյանը գրել էր իր քնարական լավագույն երկերից մեկը (որը ժողովրդի սիրած երգը դարձավ): Սա մի անկեղծ խոստովանություն է՝ տոգորված ներքին պողոթկումով, որդիհական սիրով.

Իմ այրող վշտից սիրտըս է մաշվել,
Կյանքըս է մաշվել, էլ ի՞նչս մնաց.
Լամ ու արցունքըս աղի-ծով դառնա,-
Միայն թե մայրըս վիշտս չիմանա:

Ա՛խ, գլուխըս առնիմ, ընկնիմ սարերը,
Զարկե՛մ քարե-քար, զարկեմ քարե-քար.
Սիրտըս գայլերին թող բաժին դառնա,
Միայն թե մայրըս մահս չիմանա¹⁹:

(1900)

Եվ ահա հեռավոր Շվեյցարիայում նա ստանում է մոր մահվան բոթը, պաշտելի Ապլայի, որին նա չէր տեսել երկար տարիներ ի վեր, այս ամենը շատ է տանջում բանաստեղծին և իր որդիհական հրաժեշտը նա պիտի տար պոեզիայում, ստեղծելով մեկը մյուսին հաջորդող գլուխգործոցներ:

Իսահակյանի «Հորահավաք էր: Շտապ տուն եկավ...» բանաստեղծության մեջ մայրը, իմանալով որդու ռազմաճակատ մեկնելու լուրը, նրան հրաժեշտ տալիս ուշագնաց է լինում և երբ սրափվում է ու դիմացը տեսնում իր որդուն, նրան մի պահ թվում է, թե որդին արդեն գնացել ու ողջ-առողջ կովի դաշտից տուն է եկել: Ուշագնացության մի քանի վայրկյաններին նա վերաբրում է և՝ որդու մեկնումը, և՝ պատերազմը, և՝ վերադարձը: Եվ տարաբախտ մայրն օրինում է Աստծուն, որ պահեց իր զավակին, սակայն արդեն այդ օրինանքի մեջ տագնապալից հնչում են ապագա կորուստների ղողանջները... Պատերազմը դեռևս առջևում է.

Հորահավաք էր: Շտապ տուն եկավ
Զինվորի զգեստ հագած մի տղա.

¹⁸ Իսահակյան 2003, 436:

¹⁹ Իսահակյան 2003, 241:

Իսահակյան Բ.

– Մայրի՝, ինձ օրինի՛ր, - պատանին ասավ,-
Ես էլ կովի դաշտ գնալու եղա...

Ուշաթափ ընկավ խեղճ մայրը թշվառ,
Եվ երբ ուշքն եկավ նորեն իր վրան,
Գրկեց զավակին այնդ, կարոտավառ,
Որպես թե վաղուց չեր տեսել նրան:

– Ա՛յս, ի՞նչ ուրախ եմ, փա՛ռք քեզ, աստված իմ,
Որ ողջ ետ դարձավ իմ անուշ որդիի²⁰...

(1919)

Իսահակյանի մայրական օրինանքը բխում է աշխարհի ամենաբարի սրտից: Իսահակյանը նույն գութն ու կարեկցանքն է տածում մայրական սուրբ հոգու առաջ և նույն ատելությունը՝ պատերազմների, բռնությունների, դարի խելահեղությունների հանդեպ: Հենց մայրական փխրուն հոգին է կրում մեծագոյն տառապանքը, իր ազգի զավակներին հասած ծանր ճակատագրի համար, բայց նաև մեծագոյն հավատը իր ազգի հարատևության համար:

Այդ տեսակետից բնորոշ է Իսահակյանի «Անպարտելի ոգին» պատմվածքը, որը Եղենի որբերգական իրականության հենքի վրա ցույց է տրվում մի պատկեր, թե ինչպես մի խումբ հայ մայրեր իրենց զավակներին անապատի ավազների վրա սովորեցնում են մայրենի այբուբենի տառերը: Մայրը խորհրդանիշն է մեր ժողովորդի հերոսական ու մաքառող ոգու:

«Երբ մի ժողովորդ, - գրել է Իսահակյանը, կովում է իր ազատության, գոյության համար, նա ապրում է, նա չի կորչում, եթե նույնիսկ նա պարտվում է մարտում, գոնե մնում է նրա հերոսական պատմությունը, որ սերունդներին ապրեցնում է, բարձրացնում, հերոսացնում և այդպիսով կորցրածը նորից ետ է առնում: Նա հարթանակում է»²¹: Եվ մի՛թե այսօր էլ լարաբաղյան երկրորդ պատերազմի ամենածանր հարվածը չհասավ հենց հայ մորը, սակայն նա է այն սյունը, որ դարձյալ պետք է հարատևության բարձրացնի իր աղետյալ ագին, սերմանի նրա մեջ միայն հային հատուկ ապրելու զորեղ կամք:

Այսօր ևս Իսահակյանի պանդխտության թեմայով ստեղծված երկերը մի առանձին իմաստով են հնչում հայ մարդու անպարտելի ոգու հանդեպ:

²⁰ Իսահակյան 2003, 433:

²¹ Իսահակյան 1977, 335:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Հիրավի, այդպես կարող էր գրել միայն ինքը՝ պանդուստ մարդը, այս տողերի հեղինակը.

Օտա՞ր, ամայի՛ ճամփեքի վըրա
Իմ քարավանըս մեղմ կըղողանցԵ.
Կանգնի՛ր, քարավանս, ինձի կըթվա,
Թե հայրենիքես ինձ մարդ կըկանչԵ²²:
(1903)

Ուր էլ որ գտնվել է հսահակյանը, ինչ տրամադրության մեջ էլ որ չի եղել,
նրա հայացքը միշտ ուղղված է եղել դեպի հայրենի տունը, դեպի այն սուրբ
հողը, որն ամենաքաղցրն է աշխարհում: Ահա ինչ է նա գրում Փարիզում.

Երազիս մեջ Անին տեսա, -
Տեսա մեռած մայրիկիս,
Ինչպես մանուկ գիրկն ընկա,
Համբուրեցի մայրիկիս²³:
(1932)

Կամ թե Վենետիկում.

Դու, երկնամերձ իմ հայրենիք, դո՞ւ, իինավուրց ի՞մ Հայաստան,
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, ի՞մ Հայաստան,
Դո՞ւ, ալսոր տեսիների ստեղծագործ ի՞մ Հայաստան,
Եվ նոր խոսքի ավետարեր, հազարավերք ի՞մ Հայաստան²⁴:
(1921)

1926–1930 թթ. հսահակյանը խորհրդային Հայաստանում էր, երկար
տարիների բաժանումից հետո նա պիտի տեսներ իր նոր շիվեր տվող հայրե-
նի եզրը, իր այնքան կարոտած հարազատներին ու ընկերներին, բայց չկար
մեկը, իր ամենապաշտածը, իր ամենասիրելին.

Ոտք եմ դնում հայրենական հարկը իին,
Հին որմերը խոսում են ինձ հոգեթոռվ.
Աչքս եմ նետում մորս նստած անկյունին, -

²² Իսահակյան 2003, 287:

²³ Իսահակյան 2003, 476:

²⁴ Իսահակյան 2003, 444:

Իսահակյան Բ.

– Ու՞ր է մայրս ստեղծագործ իր ժախտով²⁵...
(1926)

Նոյն շրջանում գրված «Հայրենի ծովսը» բանաստեղծության մեջ նա անբեկանելի կարոտով վերիիշում է.

...Կապոյտ երեկոն ա՛յնքան է խաղաղ,
Երգում է ծառից մի հավը սրտագոհ,
Տեսնում եմ՝ հայրս բարի, մտախոհ,
Ծանոթ շավիղով քայլում է դանդաղ:

Ինձ տուն է կանչում ձայնը մայրենի,
Խաղըս թողնում եմ. երեկո է ուշ.
Գզվում է մայրս, ժպտում է քնքուշ,
Մի արևի պես, որ նման չունի²⁶:

Մեր ուսումնասիրած թեման մի առանձին հնչերանգ է ստանում նաև իսահակյանի լեգենդներում ու բալլարներում: Այս երկերում ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, այնպիսի պատումներ, ուր նոյնպես տիրապետող է դառնում մայրական սիրո, նրա առաքինության գաղափարը:

Ումանտիկ բանաստեղծը ստեղծում է երկեր, որոնց հիմքում ընկած է ժողովրդական այս կամ այն ավանդույթը: Այդպիսի երկերից է «Մայրը» (Շիրակի ավանդավեպ) (1907 թ.) չափածո լեգենդը: Լեգենդի հիմքում մի պարզ, մաքուր ժողովրդական ակունք ունեցող պատմություն է այն մասին, թե ինչպես չար հարսի ամենօրյա կրիվների, հորդորների ազդեցության տակ ճարահատյալ տղան համաձայնում է մորը անտառ տանել ու թողնել այստեղ: Տունդարձի ճամփին որդու ականջին են հասնում մոր վերջին խոսքերը.

– Երթաս բարով, աստված քեզ հետ,
Ոտքըդ քարի թող չըգա.
Տղա՛ս, վերցրո՛ պարկը քեզ հետ,
Պարկը տանը պետք կըգա²⁷:

«Մոր սիրտը» (Հայկական ավանդավեպ) լեգենդի (1919 թ.) հիմքում ևս ընկած է հայկական մի հինավորց գրուց, պարզ ու մատչելի, բայց անհուն

²⁵ Իսահակյան 2003, 463:

²⁶ Իսահակյան 2003, 463:

²⁷ Իսահակյան 2014, 18:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

մարդկային ու ցնցող: Ապացուցելու համար, որ մոր սիրտը աշխարհի ամենաբարին է ու գքառատը, որ մոր բարոյական բարձունքին ոչ մի զավակ չի կարող հասնել, հարկավոր չէ կարդալ առանձին խոհական տրակտատներ կամ հատուկ սոցիոլոգիական ուսումնասիրություններ կատարել, բավական է կարդալ հսահակյանի այս 32 տողանոց լեզենդը և հիշել նրա եզրափակիչ տողերը.

Տղան գնաց՝ մորն սպանեց,
Երբ վազ կըտար
Սիրտը՝ ձեռքին,
Ոտքը սահեց, ընկավ վար:

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած.
— Վա՛յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղը չըցավա՞ց²⁸...

Ժամանակին այս երկը խորապես ցնցել է չիլիացի բանաստեղծ Պաբլո Ներուդային, ով հանդիպել է Ավետիք Իսահակյանի հետ Երևանում 1956 թվականին: Նման երկ կարող էր ստեղծել միայն այն հեղինակը, այն մարդը, որն իր մոր կերպարն ամեն ինչից վեր է դասել, համարել գերազույն սրբություն: Հենց այդպիսի հեղինակ էր ինքը՝ Իսահակյանը, մայրական սիրո մեծագոյն երգիչը հայ պոեզիայում:

Կարեի է ասել մինչև խոր ծերություն, մինչև կյանքի վերջին օրերը շենշող ու կենդանի է եղել բանաստեղծի սերը մոր հանդեա: Իր ստեղծագործական ուշ շրջանի ծոցատետրերից մեկում մեծ սիրերգակը թողել է հետևյալ գրառումը. «Աշխարհիս ամենագեղեցիկ բանը մոր աչքերն են»:

Մայրական սիրո թեմայով Իսահակյանի երգերը խոր արձագանք էին գտնում, բերում էին հումանիզմի հուժկու ավանդներ, որոնք իրենց արտացոլումը գտան առաջին հերթին Հովհաննես Շիրազի ստեղծագործության մեջ:

Մեր խոսքը կցանկանայինք ավարտել Իսահակյանի «Պանդուխտ որդին» (1902 թ.) բալլարդով, ուր լավագույնս միահյուսված են մայրության ու պանդխտության թեմաները.

²⁸ Իսահակյան 2014, 35:

Իսահակյան Բ.

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ

Դարդը՝ սըրտիս, աղքատ ու խեղճ, ցոպը ձեռիս, գիսակոր,
Շա՛տ տարիներ պանդուխտ եղած՝ նորեն դարձա հայրենիք.
Կյանքի բեռով մեջքս ծլուած, միտքըս շվար ու մոլո՞ր,
Յոթը սարեն, յոթը ծովեն դարձա նորեն հայրենիք:

Իմ հայրենի գեղի հանդում տեսա մանկութ ընկերիս.-
Ա՛խ, ընկեր իմ, կարոտ սրտով նըրա առաջ վազեցի,
Ասի. -«Բարո՞վ, անգի՞ն ընկեր, չե՞ս ճանաչում դուն ինձի»:
-Ախօր ես շա՛տ փոխվեր էի... չըճանաչեց նա ինձի:

Ցուայը ձեռիս գեղը մտա, անցա յարիս տան ճամփով.
Տեսա յարս վարդը ձեռին՝ մենակ կանգնած դրան մոտ.
Ասի. -«Քուրիկ, ազիզ տեսքիդ արժանացա ես բարով...»:
Նա էլ ինձի չըճանաչեց...- աղքատ էի ու փոշոտ...

Դարդը սրտիս հասա մեր տուն, տեսա ծերուկ, խեղճ մորս.
Ասի. - «Նանի, ճամփորդ մարդ եմ, գիշերս ինձ հյուր կընդունե՞ս»:
Ա՛խ, մերի՞կ ջան... վզովս ընկավ, սըրտին գըրկեց ու լացեց,-
«Ա՛խ, բալա՛ ջան, դարիբ բալա՛, էդ դո՞ւն ես...»²⁹:

(1902 թ., Շուշի)

Պատահաբար չէ, որ այս բանաստեղծությունը, ինչպես և մեր գրվածքում
բերված բոլոր երկերը, առանձնապես սիրված են մեր ժողովրդի կողմից:
Քանզի Իսահակյանի քնարերգության լարերը ուժի խոսում են հարազատ
ժողովրդի սրտի հետ: Մայրական սեր, որդիական սեր, պանդուխտի սեր՝
հայրենյաց եղի հանդեպ, - սրանք ոչ միայն զգացմունքներ են, այլև հայ ժո-
ղովրդի պատմությամբ պայմանավորված վսեմ ու առանձին խորհրդանիշներ
են, առավել բնորոշ հայ մարդուն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Իսահակյան Ավ. 2003, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 1,
Երևան, «Գիտություն», իրատ., 848 էջ

Իսահակյան Ավ. 1977, «Հշատակարան», Երևան, «Հայաստան» իրատ., 477 էջ:

²⁹ Իսահակյան 2014, 15:

Մայրական սիրո և պանդխտության թեման...

Իսահակյան Ավ. 1977, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. V, Երևան, «Սովետական գրող», 490 էջ:
Իսահակյան Ավ. 2014, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 340 էջ:

ТЕМА МАТЕРИНСКОЙ ЛЮБВИ И СКИТАЛЬЧЕСТВА В ПОЭЗИИ АВЕТИКА ИСААКЯНА

ИСААКЯН Б.

Резюме

Ключевые слова: Аветик Исаакян, мотивы творчества, материнская любовь, родина, изгнанничество, чужбина, тоска.

В поэзии Исаакяна тема материнской любви занимает одно из центральных мест.

Образу матери посвящено множество лирических стихотворений поэта: «Моей матери» (пер. А. Блока), «Что над огнем ты варишь, мать?» (пер. А. Блока), «Колыбельная» (пер. А. Блока), «Караван мой бренчит и смеется» (пер. А. Блока), «Мне грезится: вечер мирен и тих...» (пер. А. Блока), «Сон» (пер. А. Яшина), «Мне сказали: «Давно умерла твоя мать...» (пер. А. Ахматовой).

Помимо стихов, образу матери А. Исаакяном посвящены великолепные строки в поэме «Абул Ала Маари» (пер. В. Брюсова), а также в легендах и балладах: «Скиталец сын» (пер. В. Иванова), «Сердце матери» (армянское предание), «Мать» (Ширакское предание), «Сыновняя любовь», в рассказе «Непобедимый дух», а также в стихах более позднего периода: «Мать увидела меня – очень грустным...», «Смотри мама – как солнце...», «Печаль со мной, и со мной идет...».

Другой ключевой темой его поэзии была тема скитальчества – любви и тоски по далекой родине. Образ матери – Алмаст – часто олицетворяет образ родины поэта – Армению, а скиталец является олицетворением образа армянина – борца за освобождение родного народа от турецкого гнета.

**THE THEME OF MATERNAL LOVE AND WANDERING IN THE
POETRY OF AVETIK ISAHAKYAN**

ISAHAKYAN B.

Summary

Key words: Avetik Isahakyan, motives of creativity, maternal love, homeland, exile, foreign land, longing.

In Isahakyan's poetry, the theme of maternal love occupies one of the central places. Many lyrical poems of the poet are devoted to the image of the mother: "My Mother" (trans. A. Blok), "What are You Cooking over Fire, Mother?" (A. Blok translation), "Lullaby" (trans. A. Blok), "My Caravan is Jingling and Laughing" (trans. A. Blok), I dream: the evening is peaceful and quiet... (trans. A. Blok), "Dream" (trans. A. Yashin), "I was Told: "Your mother died a long time ago..." (trans. A. Akhmatova). In addition to poems, the image of A. Isahakyan's mother is portrayed with the magnificent lines in the poem "Abul Ala Maari" (trans. by V. Bryusov), as well as in legends and ballads: "The Wanderer Son" (trans. V. Ivanov), "Mother's Heart" (Armenian tradition), "Mother" (Shirak tradition), "Filial Love", in the story "Invincible Spirit", as well as in poems of a later period: "Mother Saw Me – Very Sad ...", "Look at My Mother – like the Sun ...", "Sadness is with Me, and with Me Goes ...". Another key theme of his poetry was the theme of wandering – love and longing for a distant homeland. The image of the mother – Almast – often personifies the image of the poet's homeland – Armenia, while the wanderer is an embodiment of an Armenian, the fighter for the liberation of his native people from the Turkish yoke.